Մամլո հաղորդագրություն

20 ապրիլի, 2013թ.

Հարգելի գործընկերներ,

Ս.թ. ապրիլի 22-ին, ժամը 12:30-ին Հայոց ցեղասպանության թանգարանի նախասրահում տեղի կունենա վերջին հինգ տարիների ընթացքում թանգարան-ինստիտուտի կողմից հրատարակած գրքերի շնորհանդեսը, որի ընթացքում կներկայացվեն շուրջ քսանհինգ հատորներ՝ թողարկված տարբեր մատենաշարերով: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն իր գրահրատարակչական գործունեությունն իրականացնում է «Դիվանագիտական փաստաթղթեր», «Վերապրողի հիշատակարան», «Ականատեսի վկայություններ» և այլ մատենաշարերով:

Ներկայացված հատորները ներառում են ինչպես վերահրատարակված և թարգմանված սկզբնաղբյուրային գրականություն, այնպես էլ ՀՑԹԻ գիտաշխատողների մենագրությունները:

Հարգանքներով,
Արևիկ Ավետիսյան
ՀՑԹԻ մամլո քարտուղար